

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА**

Քիմիա և կենսաբանություն

1, 2012

Химия и биология

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

УДК 615.538.56

**ՑՈՐԵՆԻ ԾԽԼԵՐԻ ԱՃԻ ՎՐԱ ՑԱԾՐ ԻՆՏԵՆՍԻՎՈՒԹՅԱՍԲ
ԾԱՅՐԱՀԵՂ ԲԱՐՁՐ ՀԱճախականությասբ
ԷԼԵԿՏՐԱՍՍԳՆԻՍԱԿԱՆ ՇԱՌԱԳԱՅԹՄԱՆ ԱԶԴԵՅՈՒԹՅՈՒՆԸ**

Մ. Ա. ՇԱՀԻՆՅԱՆ*

ԵՊՀ կենսաֆիզիկայի ամբիոն, Հայաստան

Բաժակի բառեր. ԾԲՀ ԷՄԾ, ճառագայթահարում, ներգործության առաջ-
նային օղակ, ցորենի ծլող սերմեր, կուտակման էֆեկտ:

Ներածություն: Երկրի վրա կյանքը ծագել ու զարգացել է՝ մշտապես գտնվելով արտաքին էլեկտրամագնիսական ճառագայթման (ԷՄԾ) ազդեցու-
թյան տակ, որի բնական աղբյուր են հանդիսանում հիմնականում տիեզե-
րական մարմինները, հատկապես Արեգակը: Սակայն, մարդկային գործոնի զարգացմանը զուգընթաց, երկրագնդի վրա ի հայտ եկան նաև ԷՄԾ արհեստա-
կան աղբյուրներ՝ բազմաթիվ տեխնիկական արքավորումներ, առանց որոնց
արդեն դժվար է պատկերացնել մեր կյանքը: Կենցաղում մարդն ավելի շատ ենթարկվում է ԳԲՀ և ծայրահեղ բարձր հաճախականությամբ (ԾԲՀ) ալիքների ազդեցությամբ, ուստի, ինաստ ունի ուսումնասիրել այս ալիքների ազդեցությունը կենսահամակարգերի վրա: ԾԲՀ տիրույթի (միլիմետրային) ճառագայթումը, հատկապես, մեծ կիրառություն է գտնել բժշկության բնագավառում, որպես գործուն բերապետիկ միջոց (միկրոալիքային ռեզոնանսային բերապիա): Ուստի,
վերջին ժամանակներում, բժշկակենսաբանական հետազոտությունները հիմնա-
կանում կենտրոնացած են ցածր ինտենսիվությամբ ԾԲՀ ԷՄԾ ազդեցության մեխանիզմների ուսումնասիրման վրա: Մինչ օրս կատարված հետազոտու-
թյունները ցույց են տվել, որ վերջիններս ազդում են կենդանի օրգանիզմների աճի, զարգացման, նյութափոխանակության պրոցեսների և օքսիդավերա-
կանանողական ֆերմենտների ակտիվության փոփոխության վրա [1–3]:

Կենսաբանական համակարգերում ԷՄԾ ազդեցության արդյունքում, կարող են առաջ գալ տարրեր ուղղվածության փոփոխություններ, ընդ որում, դոզա-էֆեկտ կախվածությունը՝ ոչ գծային է: Սա նշանակում է, որ, եթելով կենսահամակարգի վրա ճառագայթման փոքր դոզաների ազդեցությունից, չենք կարող գուշակել, թե՝ ինչ ազդեցություն կունենան ճառագայթման մեծ դոզաները [4–8]:

* E-mail: m.shahinyan@ysu.am

Յույց է տրվել, որ միլիմետրային ալիքները դրսնորոս են բարձր կենսաբանական ակտիվություն, նույնիսկ էներգիայի հոսքի խտության փոքր արժեքների դեպքում, ընդ որում, ԾԲՀ ԷՄՇ ներգործությունն ունի տարրեր ուղղվածություն:

Հետազոտությունների հիման վրա առաջարկվել են տարրեր վարկածներ, կենսահամակարգերի վրա ԷՄՇ ազդեցության առաջնային թիրախի առումնվ [1, 3, 9, 10]: Վարկածներից մեկի համաձայն, ԷՄՇ առաջնային թիրախ է հանդիսանում ջուրը: Օրինակ՝ փորձնականորեն հայտնաբերվել է, որ գերբարձր և ծայրահեղ բարձր հաճախականությամբ ճառագայթման ազդեցությունը ջրում խթանում է H_2O_2 -ի առաջացումը, իսկ դա նշանակում է, որ նրանում պետք է բավարար քանակությամբ OH^* ուղիղականությունը լինեն: Նույն փաստը դիտվում է նաև ջրի վրա իննացնող ճառագայթման ազդեցության դեպքում, որն ունենալով, ԷՄՇ բնույթ ավելի կոշտ ճառագայթում է (նրա քվանտն ունի ավելի բարձր էներգիա), քան ԾԲՀ ԷՄՇ: Ջուրն ասոցացված հեղուկ է, որն օժտված է մեծ դիէլեկտրիկ բափանցելիությամբ և մոլեկուլների մեծ դիպոլային մոմենտով: Վերջին հատկությունն էլ, հենց հանգեցնում է ջրի ինքնակազմավորմանը, և պայմանավորում է ըստ էության ջրի կենսաբանական նշանակությունը [5, 11, 12]:

Համաձայն մի շարք հեղինակների, ջուրը՝ յուրահատուկ կաղապար է հանդիսանում գլոբուլային սպիտակուցների տարածական կառուցվածքի ձևավորման համար: Այդպիսի կաղապարը հիշեցնում է երկարածզված տարա, որի առանցքի երկայնքով ծևավորվում են դիտուրական ինդեքտորներ [9, 10]:

Ենթադրվում է, որ ԾԲՀ ԷՄՇ ալիքներով ջրի ճառագայթահարման դեպքում, տեղի է ունենում կլաստերների տեղաշարժ, ինչը կարող է հանգեցնել ջրի կառուցվածքի երկրաչափության խանգարմանը և համակարգում՝ լարվածության զարգացնանը: Ջուրն այդ հատկությամբ հիշեցնում է ապոլիմերների: Ջուրը, ինչպես պոլիմերային կառույցները, օժտված է ուղաքսացիայի մեծ տևողությամբ, որը կազմում է ոչ թե 10^{-11} – 10^{-12} վրկ, այլ բոպեներ և անգամ ավելի երկար: Այդ պատճառով, ԷՄՇ քվանտերի էներգիան, վերածվելով ջրային կազմավորված կառույցի ներքին էներգիայի՝ կառույցի խախտման արդյունքում, կուտակվում է այնքան, մինչև հավասարվում է ջրածնական կապերի էներգիային, որը 500–1000 անգամ մեծ է էլեկտրանագնիսական դաշտի էներգիայից: Եթե կուտակված էներգիայի մեծությունը հասնում է ջրածնական կապի էներգիայի մեծությանը, տեղի է ունենում ջրածնական կապերի խզում և կառույցը քանդվում է: Արդյունքում կարող են առաջանալ ազատ իոններ և հիդրատացված էլեկտրոններ: Այսպիսվ, ԾԲՀ ԷՄՇ ազդեցությամբ ջրի կլաստերային կառուցվածքում տեղի է ունենում էներգիայի կուտակում մինչև որոշ կրիտիկական արժեք, որից հետո, դիտվում է կապերի խզում, իսկ անշատված էներգիան կարող է ձևափոխվել էներգիայի այլ ձևերի [12]:

Ուսումնասիրվել է ցածր ինտենսիվությամբ ԾԲՀ ԷՄՇ ազդեցությունը ցորենի ծիլերի ածի վրա և ջրի գերը զարգացող օրգանիզմի վրա կիրառվող ֆիզիկական գործոնի ներգործության իրականացման պրոցեսում: Մասնավորապես, ուսումնասիրվել է ճառագայթահարված ծլող սերմերի և ճառագայթահարված ջրով ծլեցված և ջրված ծիլերի զանգվածի փոփոխությունը ծիլերի ածի ընթացքում:

Նյութը և մեթոդիկան: Օգտագործվել են “Բեզոստայա” սորտի ցորենի սերմերը՝ որոշվել է ցորենի ծիլերի զանգվածը: Հատիկների ծլեցումն իրականացվել է թերմոստատում՝ $25^{\circ}C$ պայմաններում: Ծլող սերմերը և ջուրը, որն

օգտագործվել է չճառագայթված սերմերի ծիցման համար, ինչպես նաև աճող ծիլերը ջրելու համար, ճառագայթահարվել են $35,7\text{--}53,57$ գՀg աշխատանքային միջակայքով Г4-141 գեներատորի միջոցով: Ճառագայթահարումն իրականացվել է $45\text{--}53$ գՀg հաճախականություններով և $0,6 \text{ м}^3/\text{м}^2$ հոսքի խտությամբ ԷՄ ալիքներով:

Արդյունքներ և քննարկում: Ուսումնասիրվել է ցածր ինտենսիվությամբ ԾԲՀ ԷՄԾ ազդեցությունը ցորենի ծիլերի աճի վրա: Հաճախականությունների ընտրությունը պայմանավորված է նրանով, որ այդ միջակայքում են գտնվում ջրի ռեզոնանսային հաճախականությունները՝ $50,3$ և $51,8$ գՀg: Բացի այդ, նախկինում ստացված փորձնական արդյունքների համաձայն, կենսահամակարգի առավել մեծ պատասխան է գրանցվում 49 ; $50,3$; $51,8$ և $53,0$ գՀg հաճախականությամբ, ԷՄ ալիքներով ճառագայթահարման արդյունքում [15, 16]:

Որոշվել է նախօրոր ծլեցված ապա ճառագայթահարված սերմերի և ճառագայթահարված ջրով թրջված, ապա ջրված սերմերի ծիլերի զանգվածն աճի ընթացքում: Որպես ստուգիչ տարրերակ օգտագործվել են չճառագայթահարված սերմերի ծիլերը (տես աղյուսակը):

Եթե ջրի հատկությունների նման փոփոխությունները տեղի են ունենում կենսահամակարգում, ապա այն անխուսափելիորեն կմասնակցի ներգործությանը կենսահամակարգի պատասխանի ձևավորմանը [13, 14]:


20 րոպե տևողությամբ ԾԲՀ միջակայքի տարրեր հաճախականությամբ ԷՄ ալիքներով ճառագայթահարված ցորենի ծիլերի զանգվածի փոփոխությունը (մգ) մշակմանը հաջորդող օրերին

Հաճախականություն, գՀg	Ժամանակը ճառագայթահարումից հետո, օր			
	1	2	3	4
0	$6,9\pm0,3$	$13,0\pm1,0$	$32,1\pm2,6$	$45,0\pm3,8$
45,0	$6,2\pm0,1$	$12,7\pm1,0$	$25,2\pm2,1$	$39,8\pm3,4$
46,0	$6,2\pm0,1$	$12,5\pm0,9$	$27,1\pm2,1$	$45,9\pm3,8$
48,0	$6,5\pm0,3$	$12,3\pm0,9$	$27,6\pm2,2$	$42,6\pm3,7$
49,0	$6,1\pm0,1$	$14,1\pm1,1$	$34,0\pm2,7$	$51,6\pm4,3$
50,0	$5,1\pm0,1$	$11,3\pm1,1$	$28,2\pm2,4$	$45,3\pm3,8$
50,3	$5,9\pm0,1$	$15,2\pm1,2$	$33,2\pm2,6$	$48,3\pm3,9$
51,0	$6,3\pm0,2$	$11,9\pm0,9$	$22,5\pm2,1$	$33,4\pm2,6$
51,8	$5,0\pm0,1$	$14,6\pm1,1$	$33,6\pm2,6$	$50,8\pm4,1$
53,0	$6,0\pm0,1$	$16,2\pm1,2$	$33,3\pm2,5$	$47,0\pm3,9$

Ինչպես երևում է աղյուսակում բերված տվյալներից, ԾԲՀ ԷՄԾ ազդում է ծիլերի աճի ընթացքում զանգվածի փոփոխության վրա: Հաշվարկները ցույց են տալիս, որ աճի ինտենսիվությունը ստուգիչ և ճառագայթահարված տարրերակներում ծիլերի զարգացման ընթացքում փոխվում է: Այսպես, եթե ստուգիչ տարրերակներում զանգվածը 2-րդ օրն առաջին օրվա համեմատ ավելացել է $88,4\%-ով$, ապա 3-րդ օրը 2-րդ օրվա համեմատ աճել է $146,9\%-ով$, իսկ 4-րդ օրը 3-րդ օրվա համեմատ՝ $40,2\%-ով$: Ճառագայթահարված տարրերակներում աճի ինտենսիվությունը փոխվում է: Այսպես, 49 գՀg հաճախականությամբ, ԷՄԾ արդյունքում ճառագայթահարված սերմերի ծիլերի զանգվածը ճառագայթահարումից հետո 2-րդ օրը առաջին օրվա համեմատ ավելացել է $131,1\%-ով$, 3-րդ օրը 2-րդի համեմատ՝ $141,1\%-ով$, 4-րդ օրը 3-րդ օրվա համեմատ՝ $51,8\%-ով$: $50,3$ գՀg հաճախականությամբ ԷՄ ճառագայթահարման դեպքում հաշվարկվող ցուցանիշը կազմել է համապատասխանա-

քար՝ 157,6; 118,4 և 45,5%, իսկ 51,8 գՀց ԷՄԾ դեպքում համապատասխանաբար՝ 192; 130,1 և 51,2%: Մինչդեռ 45,0 գՀց հաճախականությամբ, ԷՄԾ դեպքում այդ ցուցանիշը կազմել է համապատասխանաբար 104,8; 98,4 և 57,94%, իսկ 51,0 գՀց հաճախականությամբ ԷՄԾ ճառագայթահարման դեպքում՝ 88,9; 89,1 և 48,4%: Առավել մեծ խթանիչ ազդեցություն է դիտվել 51,8 գՀց հաճախականությամբ ԷՄԾ ալիքներով ճառագայթահարման դեպքում: Ստացված արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ կիրառված միջակայրի ալիքներից առավել մեծ ներգործություն են բողնում 49,0; 50,3; 51,8 և 53,0 գՀց հաճախականություններով ալիքները, ինչը համապատասխանում է գրականության տվյալներին [1, 15, 16]: Հետագա ուսումնամիջությունների համար ընտրվել են 4 ԷՄԾ հաճախականություններ՝ 49,0; 50,3; 51,8 և 53,0 գՀց:

Ուսումնասիրվել է ծիլերի աճի վրա ԾԲՀ ԷՄԾ ազդեցության կախվածության մեծությունը ճառագայթահարման տևողությունից: Ծլող սերմերը ճառագայթահարվել են 5, 10, 20, 30, 40 րոպեների ընթացքում (նկ. 1):




Նկ. 1: Ցածր ինտենսիվությամբ ԾԲՀ ԷՄԾ տարբեր տևողությամբ ճառագայթահարման ազդեցությունը ցորենի ծիլերի զանգվածի փոփոխության վրա:

Ինչպես երևում է նկ. 1-ում, 50,3 գՀց հաճախականությամբ ԷՄԾ ճառագայթահարման դեպքում 20 րոպե տևողությամբ ճառագայթահարումն ավելի մեծ ազդեցություն ունի կենսահամակարգերի վրա, քան 40 րոպե տևողությամբ ճառագայթահարումը, 51,8 գՀց հաճախականությամբ ճառագայթահարման դեպքում 5 րոպե ճառագայթահարումն ավելի մեծ ազդեցություն ունի, քան 40 րոպե ճառագայթահարումը, իսկ 53,0 գՀց հաճախականությամբ ճառագայթահարման դեպքում ավելի մեծ ներգործություն է դիտվում 40 րոպեի դեպքում: Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ ուղիղ համեմատական կախվածություն ճառագայթահարման տևողության և կենսահամակարգի պատասխանի միջև չի դիտվում:

Պարզելու համար ԾԲՀ ԷՄԾ ներգործության առաջնային օլակը, ուսումնասիրվել է ճառագայթահարված ջրի ազդեցությունը ծիլերի աճի վրա: Նկ. 2, ա, բ

ներկայացված տվյալները վկայում են այն մասին, որ ճառագայթահարված ջրով մշակված սերմերից զարգացող ծիլերը, դրոնը աճի լնթացքում, ամեն օր ջրվում են համապատասխան տևողությամբ և հաճախականությամբ ճառագայթահարված ջրով, ավելի լավ են աճում: Ճառագայթահարված ջրով մշակված սերմերի ծիլերի աճի ինտենսիվությունն ավելի բարձր է, քան չճառագայթահարված ջրով նախօրոք ծեցված և ճառագայթահարված սերմերի ծիլերի աճի ինտենսիվությունը:



Նկ. 2: Ցածր ինտենսիվությամբ ԾԲՀ ԷՄԾ 20 րոպե տևողությամբ՝ ա) ճառագայթահարված ծլող սերմերի ծիլերի զանգվածների փոփոխությունը; բ) ճառագայթահարված ջրով թրչված և մշակված սերմերի ծիլերի զանգվածների փոփոխությունը ժամանակի լնթացքում:

Ստացված տվյալները վկայում են, որ կենսահամակարգի պատասխանը կախված է ճառագայթահարման հաճախականությունից: Ինչպես երևում է նկ. 2, թից, ավելի մեծ պատասխան դիտվում է 49,0 և 51,8 գՀց հաճախականություններով ԷՄԾ ներգործության դեպքում: 49,0 գՀց հաճախականությամբ, ԷՄ ալիքներով ճառագայթահարման դեպքում 3-րդ օրը 2-րդ օրվա համեմատ զանգվածն ավելանում է 31,6%-ով և 4-րդ օրը 3-րդ օրվա համեմատ՝ 90,99%-ով: 51,8 գՀց հաճախականությամբ ԷՄ ալիքներով ճառագայթահարման դեպքում 3-րդ օրը 2-րդ օրվա համեմատ զանգվածը ավելանում է 78,4%-ով, 4-րդ օրը 3-րդ օրվա համեմատ՝ 79,9%-ով: Ստացված տվյալներից հետևում է, որ ծլող սերմերի ճառագայթահարման դեպքում ճառագայթման ազդեցությունը դրսնորվում է ավելի արագ՝ ճառագայթմանը հաջորդող 2-րդ և 3-րդ օրերին աճի ինտենսիվությունն ավելի բարձր է, քան ճառագայթահարված ջրով թրչված և մշակված սերմերի դեպքում: Սակայն ճառագայթահարված ջրով սերմերի թրցելու և մշակելու դեպքում աճի բարձր ինտենսիվությունն ավելի երկար է պահպանվում. այսպես, 4-րդ օրն աճի ինտենսիվությունը 3-րդ օրվա համեմատ ավելի բարձր է, քան ծլող սերմերի ճառագայթահարման դեպքում: Ստուգիչի համեմատ ծիլերի զանգվածն ավելի մեծ է:

Այսպիսով, ստացված տվյալները վկայում են այն մասին, որ ճառագայթահարված ջուրը և ազդում է կենսահամակարգի վրա և ճառագայթահարված ջրի երկարատև ազդեցությանը ենթարկված ծիլերի մոտ դիտվում է ներ-

գործության կուտակման երևոյթ, այսինքն ժամանակի ընթացքում կենսահամակարգի պատասխանը աճում է՝ 4-րդ օրը աճի ինտենսիվությունը ամենամեծն է մյուս օրերի համեմատ, ի տարբերություն ծլող սերմերի ճառագայթահարման դեպքի, եթե 4-րդ օրն արդեն աճի ինտենսիվությունը նվազում է: Ստացված արդյունքները թույլ են տալիս եզրակացնել, որ կենսահամակարգերի հետ ԾԲՀ ԷՄՇ փոխազդեցության առաջնային օլակ է հանդիսանում ջուրը:

Ստացվել է 13.06.2011

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Тамбиев А.Х., Кирикова Н.Н. // Биомедицинская радиоэлектроника, 2000, № 1, с. 23–33.
2. Преснухина Н.Г., Дерюгина А.В., Крылов В.Н. // Вестник Нижегородского университета им. Лобачевского. Серия Биология, 2003, вып. 1, № 6, с. 51–56.
3. Петросян В.И., Синицын Н.И., Елкин В.А. и др. // Биомедицинская радиоэлектроника, 2001, № 5–6, с. 62–114.
4. Давыдов Б.И., Тихончук В.С., Антипов В.В. Биологическое действие, нормирование и защита от электромагнитных излучений. М.: Энергоатомиздат, 1984, 176 с.
5. Синицын Н.И., Петросян В.И., Елкин В.А., Девятков Н.Д., Гуляев Ю.В., Бецкий О.В. // Биомедицинская радиоэлектроника, 1998, № 1, с. 5–23.
6. Ситько С.П., Бундюк Л.С., Кузьменко А.П., Тодор И.Н. // Экспериментальная онкология, 1996, т. 18, № 4, с. 419–422.
7. Newmyer S.L., de Montellano P.R. // J. Biol. Chem., 1995, v. 270, p. 19430–19438.
8. Welinder K.G. // Eur. J. Biochem., 1996, p. 483–502.
9. Бецкий О.В. В сб.: Вопросы использования электромагнитных излучений малой мощности КВЧ в медицине. КВЧ-терапия. Ижевск: АО НИЦ «ИКАР», 1992, с. 2–6.
10. Девятков Н.Д., Бецкий О.В., Гельвич Э.А., Голант М.Б., Махов А.М., Реброва Т.Б., Севастьянова Л.А., Смолянская А.З. // Радиобиология, 1981, т. 21, вып. 2, с. 163–171.
11. Девятков Н.Д., Голант М.Б., Бецкий О.В. Миллиметровые волны и их роль в процессах жизнедеятельности. М.: Радио и связь, 1991, с. 168.
12. Мосин О.В. // Воздействие на воду электромагнитных волн. <http://www.o8ode.ru>
13. Бабаян Ю.С., Варdevanyan П.О., Антонян А.П. и др. // Биомедицинские технологии и радиоэлектроника, 2006, № 11, с. 64–68.
14. Kalantaryan V.P., Vardevanyan P.O., Antonyan A.P. et al. // Progress in Electromagnetics Research Letters, 2010, v. 13, p. 1–9.
15. Неркарян А.В., Парсаданян М.А., Минасбекян Л.А., Дарбинян М.Р., Калантарян В.П., Варdevanyan П.О. VI Международный Симпозиум “Новые и нетрадиционные растения и перспективы их использования”, 13–17 июня. Пущино, 2005, т. 3, с. 185–188.
16. Вадреванян П.О., Неркарян А.В., Минасбекян Л.А. и др. VII Международный Симпозиум “Новые и нетрадиционные растения и перспективы их использования”, Пущино, 18–22 июня. 2007, т. 2, с. 63–66.

М. А. ШАГИНЯН

ВЛИЯНИЕ ЭЛЕКТРОМАГНИТНЫХ ВОЛН КРАЙНЕ ВЫСОКИХ ЧАСТОТ И НИЗКОЙ ИНТЕНСИВНОСТИ НА РОСТ ПРОРОСТКОВ ПШЕНИЦЫ

Резюме

Для выяснения роли воды в процессе воздействия ЭМВ КВЧ на биосистему и участия воды в формировании ответной реакции биосистемы было исследовано влияние ЭМВ КВЧ низкой интенсивности на рост пророст-

ков пшеницы. Выявлено, что облучение прорастающих семян и обработка семян и проростков облученной водой стимулируют рост проростков. Предполагается, что ведущая роль в процессе формирования ответа биосистемы на воздействие внешнего физического поля принадлежит воде. Показано, что повторные воздействия облученной воды на развивающиеся проростки усиливают отклик биосистемы на внешнее воздействие. Наблюдается кумулятивный эффект.

M. A. SHAHINYAN

INFLUENCE OF ELECTROMAGNETIC WAVES WITH EXTREMELY HIGH FREQUENCY AND LOW INTENSITY ON THE GROWTH OF WHEAT GERMS

Summary

To find out the role of water in EMW effect process with extremely high frequency on biosystem and the participation of water in formation of response reaction of biosystem, the influence of EMW with extremely high frequency and low intensity on wheat germ growth has been investigated. Irradiation of germinating seeds and cultivation of seeds and germs by irradiated water stimulate the growth of germs. It is assumed, that the leading role in the response forming process of biosystem to the external physical field effect belongs to water. It has been shown, that the repeated effects of irradiated water on developing germs reinforce the biosystem response to the external effect. Cumulative effect is observed.